ԱՌԱՋԱՐԿ

Մխիթար Հայրապետյանի, Արտակ Մանուկյանի, Համազասպ Դանիելյանի, Սերգեյ Բագրատյանի, Վլադիմիր Վարդանյանի և Արթուր Դավթյան համահեղինակությամբ ներկայացվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում (այսուհետ՝ նաև Օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Պ-527-25.03.2020-ՊԻ-011/1 նախագիծը:

Նախագծով ի թիվս այլ փոփոխությունների, առաջարկվել է Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում կատարել փոփոխություն «առնվազն մեկ քառորդը» բառերը փոխարինելով «առնվազն կեսից ավելին բառերով»՝

«Հոդված 15. Մշտական հանձնաժողովի նիստերի անցկացման կարգը

1. Մշտական հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է (գրանցվել է) հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն <u>կեսից ավելին</u> և նիստը նախագահում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում՝ նրա տեղակալը կամ հանձնաժողովի կողմից որոշված անդամը:... »

Սակայն, հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում տեղի ունեցած քննարկումները, Կառավարության կողմից ներկայացված դիրքորոշումը և հաշվի առնելով նախագծով առաջարկվող փոփոխության արդյունքում հանձնաժողովներում քվորում ապահովելու տեսակետից արհեստական բարդության ստեղծումը, ՀՀ ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունն առաջարկում է անփոփոխ թողնել Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը, ուստի և մշտական հանձնաժողովի նիստն իրավազոր համարել եթե նիստին ներկա է (գրանցվել է) հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը: